



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 117-Ա/2

«24» հունվարի, 2023 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ
ԹԵՄԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԻՀ ԱՀԽ - 2023» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 04.10.2022 թ. N 1787- Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հունվարի 18-ի նիստի N2 արձանագրությունը և Իտալիայի Հանրապետության Ազգային հետազոտական խորհրդի հետ ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը հաստատելու մասին համատեղ որոշումը, ինչպես նաև ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին՝

- ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,
- կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,
- ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի փետրվար ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրցյանին:

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԹԵՄԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2023» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1. Կենսաբանական գիտություններ	23SC-CNR-1F003	Ալեքսանյան Ալլա Սամվելի	Հայաստանում երկրաբազմազանության և կենսաբազմազանության փոխազդեցությունն անտառային և տափաստանային բնակմիջավայրերում էկոկլիմայական գրադիենտի երկայնքով. գլոբալ տաքացման հետևանքների համար կիրառվող տեսական հայեցակարգ	ՀՀԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2. Ֆիզիկա և աստղագիտություն	23SC-CNR-1C006	Անանիկյան Ներսես Սիրելյանի	Քվանտային մագնիսների թերմոդինամիկա և բազմամարմին հարաբերակցություններ	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
3. Կենսաբանական գիտություններ	23SC-CNR-1F001	Առաքելյան Մարինե Սեմյոնի	Հայաստանում երկկենցաղների և սողունների որոշ տեսակների առողջության գնահատումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոր, վարակիչ հարուցիչներին	«Երեւանի պետական համալսարան» հիմնադրամ
4. Ֆիզիկա և աստղագիտություն	23SC-CNR-1C007	Դեմիրխանյան Գագիկ Գևորգի	Yb3+ և Tm3+ իոններով լեզիրված լազերային ակտիվ YAG, LuAG և YSAG կերամիկական և միաբյուրեղ նոնաքարերի կառուցվածքային և սպեկտրալ-կինետիկական հատկությունների համեմատական ուսումնասիրություն	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
5. Քիմիա	23SC-CNR-1D009	Մկրտչյան Աննա Ֆելիքսի	Զկոդավորող ամինաթթուների սինթեզ՝ երկու դասի հակաբակտերիալ և հակաքաղցկեղային պեպտիդների հատկությունները բարելավելու համար	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ
6. Սոցիոլոգիա	23SC-CNR-5D014	Սարգսյան Շուշանիկ Արթուրի	Հայաստանյան հետազոտությունների գնահատման համակարգի մշակում՝ հիմնված գիտաչափական մոտեցման վրա	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
7. Քիմիա	23SC-CNR-1D002	Սիմոնյան Հայարփի Մանթաշի	Սինթետիկ ալֆա-ամինոթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար	«Երեւանի պետական համալսարան» հիմնադրամ
8. Կենսաբանական գիտություններ	23SC-CNR-1F010	Փանոսյան Հովիկ Հարությունի	Հայաստանի էքստրեմալ միջավայրերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէները որպես էկզոպոլիսախարիդների ստացման աղբյուր. էկզոպոլիսախարիդների քիմիական կառուցվածքն ու սինթեզն ապահովող գեները	«Երեւանի պետական համալսարան» հիմնադրամ